



2025

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

01	Բանկի մասին համառոտ	
	IDBank-ը մեկ հայացքով	04
	Բանկի կառավարման մարմինները	05
	Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները	06
	Մեր ձեռքբերումները	07
	IDBank-ը որպես պարտատոմսերի թողարկող	08
02	Մակրոտնտեսական ակնարկ	
	ՀՀ տնտեսությունը	10
	ՀՀ ֆինանսական համակարգը	11
03	Ֆինանսական հաշվետվություն	
	Ֆինանսական արդյունքների ամփոփում	13
	Ֆինանսական հաշվետվություններ	15
04	Ռազմավարական հաշվետվություն	
	Ռազմավարական ծրագրերի իրագործում	20
	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն	23
05	Ռիսկերի կառավարում	
	Հիմնական տնտեսական նորմատիվներ	25
	Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ	26
06	Պատասխանատու անձանց հայտարարություն	28

1

IDBank-ը մեկ հայացքով	04
Բանկի կառավարման մարմինները	05
Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները	06
Մեր ձեռքբերումները	07
IDBank-ը որպես պարտատոմսերի թողարկող	08

IDBank-ը մեկ հայացքով

2025թ. 1-ին կիսամյակի արդյունքներով

- Տրանզակցիաների գծով առաջատար
- BNPL լուծումների առաջատար
- Կապիտալի համարժեքության բարձր մակարդակ

Ակտիվներ	476 մլրդ.
Պարտավորություններ	399 մլրդ.
Ավանդներ, Հաշիվներ	235 մլրդ.
Կապիտալ	77 մլրդ.
Զուտ շահույթ	9,6 մլրդ.

Moody's
վարկանիշ

Ba3 – երկարաժամկետ տեղական և արտարժույթով ավանդներ
Հեռանկար - կայուն

Հայաստանում անկանխիկ վճարումների մոտ 25%-ի ապահովում

- Առաջատար 3 բանկերի շարքում՝ թողարկված քարտերի թվով
- Քարտերով վճարումների ավելի քան 9%* աճ
- Թվային հարթակում ակտիվ հաճախորդների 16%* աճ

Կորպորատիվ բանկային հաճախորդներ	32 հազ.
Մանրածախ բանկային հաճախորդներ	700 հազ.
Թվային հարթակում գրանցված ակտիվ հաճախորդներ	85.0%
Քարտեր	474 հազ.
“Գնիր հիմա, վճարիր հետո” 0%-ով POS տերմինալներ	11,000+
Աշխատակիցներ	1,023

* Աճը ներկայացված է 2024թ.-ի 1-ին կիսամյակի նկատմամբ

Բանկի կառավարման մարմինները

Բանկի խորհուրդը



Արթուր Զախարյան
խորհրդի նախագահ



Կարեն Մարգարյան
խորհրդի անդամ



**Ֆերնանդո
Կաստիլյեիրաս**
խորհրդի անդամ



Անդրեաս Բլազե
խորհրդի անդամ



Ելենա Խաչվանքյան
խորհրդի անդամ

Բանկի 100% բաժնետերը
«ID Group» ՓԲԸ-ն է



Բանկի վարչությունը



Մհեր Աբրահամյան
Վարչության նախագահ



Կարեն Նալբանդյան
Բիզնեսի զարգացման
տնօրեն,
Վարչության անդամ



Սերգեյ Առաքելյան
Թվային Բանկինգի
տնօրեն,
Վարչության անդամ



Լիլիթ Սարգսյան
Ֆինանսական տնօրեն,
Վարչության անդամ



Անուշիկ Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ,
Վարչության անդամ



Լիլիթ Գրիգորյան
Գործառնական տնօրեն,
Վարչության անդամ



Արման Վսատրյան
Ներդրումային բիզնեսի
գծով տնօրեն,
Վարչության անդամ



Արթուր Զամբարծումյան
Ռիսկերի կառավարման
գծով տնօրեն,
Վարչության անդամ



Վաչե Վարսյան
Կորպորատիվ
բիզնեսի տնօրեն,
Վարչության անդամ

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները



Բանկի առաքելությունը

Լինել առաջին ընտրության բանկ՝ ընդլայնելով մեր հաճախորդների հնարավորությունները և առաջարկելով նրանց աճող կարիքներին համապատասխան նորարար լուծումներ:



Բանկի տեսլականը

Դառնալ առաջատար թվային բանկը Հայաստանում՝ ընդլայնելով մեր նորարարական, հաճախորդամետ գործունեությունը:



Բանկի արժեքները

> **Նորարարություն** - Նորարար լինելը մեր ԴՆԹ-ում է: Մենք միավորում ենք ֆինանսները և տեխնոլոգիաները՝ մեր հաճախորդների կյանքը հարստացնելով բարձրորակ, անվտանգ և արագ ծառայություններով:

> **Թափանցիկություն** - Բիզնեսում մենք թափանցիկ ենք ու ազնիվ և անսասան էթիկական չափանիշներով ենք առաջնորդվում մեր թիմի, հաճախորդների, գործընկերների և բաժնետերերի հետ բոլոր հարաբերություններում:

> **Հաճախորդամետություն** - Մեր հաճախորդները մեր գործունեության կենտրոնում են: Մենք առաջնահերթություն ենք տալիս նրանց կարիքներին՝ տրամադրելով անհատականացված փորձառություն և ապահովելով նրանց գոհունակությունը:

> **Թիմ** - Մեր հարստությունը մեր մարդիկ են: Մենք խրախուսում ենք մեր թիմին աշխատել ոգևորությամբ և լինել ստեղծարար՝ շարունակաբար զարգացնելով իրենց հմտությունները և իրացնելով ողջ պոտենցիալը:

> **Սոցիալական պատասխանատվություն** - Կայուն զարգացման մեր հանձնառությամբ օգնում ենք նվազեցնել բնապահպանական և սոցիալական ռիսկերը՝ հավաստիանալով, որ մեր գործունեությունը երկարատև դրական ազդեցություն կթողնի համայնքի վրա:

Մեր ձեռքերումները

MOODY'S



BACEE

AMX Armenia Securities Exchange



- ✓ **Ba2** - կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշ (CRRs)
- ✓ **Ba3** - տեղական արժույթով և արտարժույթով ներդրվող ավանդների երկարաժամկետ վարկանիշ

IDBank-ը առաջին հայկական բանկերից մեկն է, որն առաջարկում է **SWIFT global payment innovation (gpi)** ծառայություններ

IDBank-ը առաջին հայկական բանկն է, որը պաշտոնապես միացել է Առևտրի Միջազգային Պալատին (ԱՄՊ)

ESG-ի փոխակերպում և ռազմավարության իրականացում՝ համաձայն Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (ICMA) սկզբունքների

Բանկը միացել է ֆինանսների և առևտրի բանկային միությանը (**BAFT**)՝ միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում

IDBank-ը պաշտոնապես միացել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բանկային ասոցիացիային (**BACEE**)

Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվել են AMX-ում և ներառված են պարտատոմսերի հիմնական Abond և Bbond ցուցակներում

IDBank-ը՝ **VISA** քարտերի խոշոր թողարկողներից Հայաստանում

IDBank-ը որպես պարտատոմսերի թողարկող


Բանկն իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվում են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը:

2025թ. 1-ին կիսամյակի ընթացքում Բանկը իրականացրել է 2 պարտատոմսերի թողարկում՝ 12 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով:

2025 թվական	1-ին թողարկում	2-րդ թողարկում
Թողարկման ընդհանուր ծավալը	5 մլն ԱՄՆ դոլար	7 մլն ԱՄՆ դոլար
Տարեկան եկամտաբերությունը	4.75%	4.75%
Մարման ժամկետ	27 ամիս	30 ամիս

✓ Արժեկտրոնի վճարման
եռամսյակային պարբերականություն

Թողարկված պարտատոմսեր (մլրդ ՀՀ դրամ)



2025թ. հունիսի 30-ի դրությամբ թողարկված պարտատոմսերից առաջնային շուկայում տեղաբաշխվել է 12 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմս:

2025թ. հունիսի 30-ի դրությամբ երկրորդային շուկայում շրջանառվում են IDBank-ի կողմից իրականացված 7 թողարկումների պարտատոմսերը, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 25 մլն ԱՄՆ դոլար և 2,5 մլրդ ՀՀ դրամ:

Պարտատոմսերում ներդրողների ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել

- Պարտատոմս ձեռք բերելիս ներդրողը հիմնականում կրում է հետևյալ ռիսկերը՝
- ✓ Շուկայական ռիսկ (Տոկոսադրույքի ռիսկ, Արտարժույթային ռիսկ և այլն),
 - ✓ Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ,
 - ✓ Գնաճի ռիսկ

30/06/2025թ դրությամբ շուկայում ներդրողի ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել:

2

Մակրոտնտեսական ակնարկ

ՀՀ տնտեսությունը


10

ՀՀ ֆինանսական համակարգը


11

ՀՀ տնտեսությունը


Տնտեսական ակտիվության ցուցանիշ




Գնաճ (տարեկան, %)*



Միջին փոխարժեքներ




Վերաֆինանսավորման դրույքաչափ (%)




ՀՀ ֆինանսական համակարգը


Բանկերի վարկերը ըստ արժույթների, մլրդ ՀՀ դրամ




Բանկերի ավանդները (ներառյալ՝ հաշիվները) ըստ արժույթների, մլրդ ՀՀ դրամ



1 տարուց ավելի ժամկետայնությամբ ավանդների միջին տոկոսադրույք



1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի միջին տոկոսադրույք



3

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական արդյունքների ամփոփում


13

Ֆինանսական հաշվետվություններ


15

Ֆինանսական արդյունքների ամփոփում


Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)




Հաճախորդներին տրված վարկեր ու փոխառություններ (մլրդ ՀՀ դրամ)




Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)




Վարկային պորտֆելի աճի տեմպ



Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)




Վարկային պորտֆելի կառուցվածք %




Ֆինանսական արդյունքների ամփոփում


Տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)




Չուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)




Միջնորդավճարների և այլ վճարների եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Գործառնական եկամուտ (մլրդ ՀՀ դրամ)



Շահույթ հարկումից հետո (մլրդ ՀՀ դրամ)



*Տարեկան ցուցանիշները արտացոլում են արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից ստուգված տվյալները:

Ֆինանսական հաշվետվություններ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ միջանկյալ հաշվետվություն

«30» Հունիսի 2025 թ.

Արդյունավետ տոկոսադրույթի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ

Տոկոսային ծախս

Ջուտ տոկոսային եկամուտ

Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ

Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս

Միջնորդավճարների և այլ վճարների գծով Ջուտ եկամուտ/(ծախս)

Ջուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

Ջուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով

Ջուտ իրացված (վնաս)/օգուտ ներդրումային արժեքի գծով

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս

Այլ գործառնական եկամուտ

Այլ գործառնական ծախս

Գործառնական եկամուտ

Ֆինանսական գործիքների արժեքկումից Ջուտ կորուստներ

Անձնակազմի գծով ծախսեր

Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Շահույթ մինչև շահութահարկով հարկումը

Շահութահարկի գծով ծախս

Ժամանակաշրջանի Ջուտ շահույթ

Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի

Հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս

Ներդրումային արժեքի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.

իրական արժեքի Ջուտ փոփոխություն

շահույթ կամ վնաս վերադասակարգված Ջուտ գումար

Հնդամներ հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս

Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ Ժամանակաշրջանի համար՝ առանց շահութահարկի

Հնդամներ համապարփակ եկամուտ Ժամանակաշրջանի համար

Հաշվետվության վավերացման ամսաթիվը

հազ. դրամ

01/04/2025 - 30/06/2025	01/01/2025 - 30/06/2025	01/04/2024 - 30/06/2024	01/01/2024 - 30/06/2024
հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
9,654,019	18,810,907	7,530,762	14,753,818
(3,376,359)	(6,425,196)	(2,280,360)	(4,486,061)
6,277,660	12,385,711	5,250,402	10,267,757
3,927,724	7,420,425	3,159,630	5,898,557
(2,655,669)	(5,064,223)	(2,478,601)	(4,486,122)
1,272,055	2,356,202	681,029	1,412,435
2,527,077	5,627,636	3,093,763	4,637,827
136,509	471,723	(300,711)	31,345
17,675	(50,091)	11,824	17,377
363,189	699,692	300,000	599,474
680,805	916,765	108,856	234,183
(344,274)	(593,960)	(133,849)	(260,263)
10,930,696	21,813,678	9,011,314	16,940,135
(674,248)	(1,372,797)	(285,906)	(483,233)
(2,662,262)	(5,048,909)	(1,785,007)	(3,492,399)
(1,922,713)	(3,752,637)	(1,562,749)	(2,957,848)
5,671,473	11,639,335	5,377,652	10,006,655
(992,836)	(2,066,396)	(1,021,516)	(1,826,801)
4,678,637	9,572,939	4,356,136	8,179,854
(34,509)	(6,804)	(1,380)	145,842
(8,208)	53,588	(1,269)	(1,693)
(42,717)	46,784	(2,649)	144,149
(42,717)	46,784	(2,649)	144,149
4,635,920	9,619,723	4,353,487	8,324,003

14 Հունիսի 2025թ.

Վարչության նախագահ՝ Մհեր Աբրահամյան
Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ միջանկյալ հաշվետվություն

«30» Հունիսի 2025 թ.

	30/06/25	31/12/24
	հազ. դրամ	հազ. դրամ
ԱՎՏՌՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	59,207,121	39,267,755
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	14,728,834	14,606,422
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	77,439,297	61,925,847
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	9,161,914	870,332
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
- Բանկի կողմից պահվող	13,601,552	15,339,459
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	123,111	385,583
Անորոշիվ գտնված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
- Բանկի կողմից պահվող	11,400,939	46,323,507
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	35,942,931	14,692,076
Հաճախորդներին տրված վարկեր	226,689,122	200,859,003
Առգրավված ակտիվներ	1,707,608	2,020,530
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	8,286,317	7,586,623
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	10,636,234	10,929,352
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	3,274,338	3,456,651
Այլ ակտիվներ	3,862,197	4,196,518
Ընդամենը ակտիվներ	476,061,515	422,459,658
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	44,503,095	17,095,588
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	89,076,154	71,711,412
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	235,129,760	223,020,022
Ընթացիկ հարկային պարտավորություններ	592,452	2,073,310
Թողարկված պարտքային արժեթղթեր	16,994,389	17,120,222
Հետաձգված հարկային պարտավորություն	898,190	337,070
Վարձակալության գծով պարտավորություններ	3,657,487	3,799,406
Այլ պարտավորություններ	8,128,553	12,840,916
Ընդամենը պարտավորություններ	398,980,080	347,997,946
ՄԵՓԱՎԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Բաժնետիրական կապիտալ	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ	5,014,099	5,014,099
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	444,011	397,227
Զբաղիված շահույթ	37,651,475	35,078,536
Ընդամենը սեփական կապիտալ	77,081,435	74,461,712
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	476,061,515	422,459,658

Վարչության նախագահ՝ Միեր Աբրահամյան
Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

Ֆինանսական հաշվետվություններ

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ միջանկյալ հաշվետվություն
«30» Հունիսի 2025 թ.

հազ. դրամ

Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից

Ստացված տոկոսներ	17,955,174	14,283,175
Վճարված տոկոսներ	(5,902,711)	(3,974,007)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ	7,420,425	5,898,557
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ	(5,064,223)	(4,486,122)
Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով	558,728	107,564
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնական գործունեություններից	3,646,721	4,730,240
Այլ ստացված եկամուտ/(կատարված ծախսեր)	33,040	(434,602)
Անձնակազմի գծով ծախսերի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(8,084,408)	(6,612,427)

Գործառնական ակտիվների (աճ/նվազում)

Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	(727,414)	103,561
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(147,481)	(688,398)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառվություններ	(11,834,341)	12,912,375
Հաճախորդներին տրված վարկեր	(24,968,593)	(18,443,088)
Առգրավված ակտիվներ	341,033	116,592
Այլ ակտիվներ	283,744	12,074,724

Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)

Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	10,217,924	(5,127,152)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	27,405,003	6,002,021
Հաճախորդներին ընթացիկ հաշիվներ և ավանդներ	9,261,095	(1,599,933)
Այլ պարտավորություններ	(1,792,211)	(1,744,609)

Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգուտ/գործված) գուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկի վճարումը

Վճարված շահութահարկ	(3,125,000)	(3,260,000)
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգուտ/գործված) դրամական հոսքեր	15,476,505	9,858,471

Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում(վճառոր)	1,853,467	(1,660,778)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում(վճառոր)	13,375,445	5,615,351
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում(վճառոր)	231,627	(335,917)
Ներդրումային գործունեության համար օգուտ/գործված դրամական հոսքեր	15,460,539	3,618,656

Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից

Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	4,466,937	5,781,169
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(4,873,846)	(6,033,836)
Մուտքեր ներգրավված միջոցներից	1,461,316	1,222,078
Ներգրավված միջոցների մարում	(2,098,673)	(1,766,015)
Վճարված շահաբաժիններ	(10,500,000)	(300,000)
Վարձակալության գծով պարտավորությունների ավելացում(մարում)	(340,309)	254,700
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր	(11,884,575)	(841,904)

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ

Փոխանակման փոխարժեքի փոփոխության ադիցցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	19,052,469	12,635,223
Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ադիցցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	891,876	(1,211,347)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	(4,979)	(2,136)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	39,267,755	36,606,515
	59,207,121	48,028,255

Վարչության նախագահ՝ Միեր Աբրահամյան
Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

Ֆինանսական հաշվետվություններ

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ միջանկյալ հաշվետվություն
«30» Հունիսի 2025 թ.

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Բաժնետիրական կապիտալ	Ըմբիսիոն եկամուտ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	Զբաղիված շահույթ	հազ. դրամ
					Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ. (ստուգված)	33,971,850	5,014,099	119,492	24,379,351	63,484,792
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք					
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	8,179,854	8,179,854
Վճարված շահութաբաժիններ	-	-	-	(300,000)	(300,000)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	-	-
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	145,842	-	145,842
Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	(1,693)	-	(1,693)
Ընդամենը հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	144,149	-	144,149
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	144,149	-	144,149
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք Ժամանակաշրջանի համար	-	-	144,149	-	144,149
Շենքերի վերագնահատումից աճի պահուստի հակադարձում	-	-	-	-	-
Մնացորդը առ 30 հունիսի 2024թ.	33,971,850	5,014,099	263,641	32,259,205	71,508,795
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ. (ստուգված)	33,971,850	5,014,099	397,227	35,078,536	74,461,712
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք					
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	9,572,939	9,572,939
Վճարված շահութաբաժիններ	-	-	-	(7,000,000)	(7,000,000)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	-	-
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	(6,804)	-	(6,804)
Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	53,588	-	53,588
Ընդամենը հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	46,784	-	46,784
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	46,784	-	46,784
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք Ժամանակաշրջանի համար	-	-	46,784	-	46,784
Մնացորդը առ 30 հունիսի 2025թ. (չստուգված)	33,971,850	5,014,099	444,011	37,651,475	77,081,435

Վարչության նախագահ՝ Միեր Աբրահամյան
Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

4

Ռազմավարական հաշվետվություն

Ռազմավարական ծրագրերի իրագործում

20

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

23

Idram&IDBank -ը հայկական առաջատար թվային Էկոհամակարգն է թվային բանկինգի, վճարային և ֆինանսական ծառայությունների ոլորտում

730,000+ օգտատեր՝
Հայաստանի տնտեսապես
ակտիվ բնակչության 55%-ը

Թվային բանկինգի փարձեք
ֆունկցիոնալություն

**Հեռավար գրանցում և
հաճախորդների
նույնականացում**
սմարթֆոնի միջոցով

**15 բանկերի և 18 վարկային
հաստատությունների համար
վճարային ագրեգատոր,**
համագործակցություն 1000+
ծառայություններ
մատուցողների հետ,
Ներառյալ. երկրի բոլոր
հիմնական առցանց
ծառայությունները և
հանրային ծառայությունները

**Անհայտ QR վճարումներ
24,000+ ֆիզիկական
վաճառակետերում,**
Ներառյալ. սուպերմարկետներ,
ռեստորաններ, սրճարաններ,
խանութներ, հյուրանոցներ և
այլն

Ապահով վճարում
Հայաստանի ավելի քան 980
առցանց խանութներում web
QR -ի և բջջային
դրամապանակի միջոցով



Ինտեգրված
ստացիոնար հիմն վճարիչ հետո
լուծումը առցանց և QR
վճարման տարբերակով
գնումների և
ծառայությունների համար՝
24,000+ POS-ով, Ներառյալ
11,000+ POS, որը
տրամադրում է մինչև 6 ամիս
Rocket line 0% անստոկոս
վճարման հնարավորություն

470,000+ ակտիվ քարտեր

Առաջատար Հայաստանում
VISA քարտերի թողարկման
ոլորտում

**P2P ակնթարթային
դրամական փոխանցում**
հեռախոսահամարով 7
քարտի համարով
Հայաստանում և արտերկրում

**Idram Junior – Հայաստանում
երեխաների և դեռահասների
համար նախատեսված
առաջին ֆինանսական
հաճեցվածք՝** անհայտ QR
վճարումների և
փոխանցումների
ֆունկցիոնալությամբ


**Id+ հավատարմության
թվային հարթակ** վիրտուալ
բոնուսային և նվեր քարտերով
առևտրով զբաղվողների և
օգտատերերի համար,
ինչպես նաև բոնուսային
փոխանակում (աճուրդ)

Նոր մասնաճյուղեր «Հոմալեքս Մոլում» և Կապան քաղաքում

Շարունակաբար զարգացնելով թվային ծառայությունները և հաճախորդների 85%-ին սպասարկելով հենց թվային ուղիներով, Բանկը լիարժեք գիտակցում է, որ բազմաթիվ հաճախորդների համար կարևոր է նաև Բանկի ֆիզիկական ներկայությունը տարբեր տարածաշրջաններում:

2025թ. մայիսին տեղի ունեցավ Սյունիքի մարզում առաջին մասնաճյուղի բացումը **Կապան քաղաքում**, որը սպասված էր տեղի բնակիչների կողմից, իսկ 2025թ. հունիսին IDBank-ը հասանելի դարձավ Նորաբաց **Հոմալեքս Մոլում**, ընդ որում երկարացված աշխատանքային գրաֆիկով (երկուշաբթից կիրակի) և բանկային ամբողջական ծառայություններով՝ հաշիվների բացումից մինչև բիզնես վարկավորում:

Երկու նոր մասնաճյուղերն էլ հազեցած են ժամանակակից տեխնիկական լուծումներով արագ և հարմարավետ սպասարկման համար, իսկ 24/7 IDBanking գոտում ցանկացած օր, ցանկացած ժամի հաճախորդները կարող են կատարել իրենց գործարքները:



Հասցե՝ գյուղ Պոռշյան, Գ. Չաուշի խճ. 1/4



Հասցե՝ ք.Կապան, Արամ Մանուկյան փողոց 1/68

Արշավներ և լոյալության նախագծեր

2025 թվականի առաջին կիսամյակում իրականացվել է 13 արշավ: Յուրաքանչյուր նախաձեռնություն նպատակ ունի բարձրացնել հաճախորդների ներգրավվածությունը մեր Էլեկտրոնային ապահովագրության գործարքային ակտիվությունը և ապահովել առավել հարմարավետ ֆինանսական փորձառություն:

Հաճախորդների փորձառության բարելավման նպատակով իրականացվել են արշավներ, որոնք ներառել են առօրյա գործարքների խրախուսում և ճամփորդական մի շարք առավելություններ՝ **հյուրի մուտք** բիզնես սրահ, **Travel** քարտապանների համար **հավելյալ մուտք, միջազգային վճարումների դիմաց 5% idcoin, ավիատոմսերի** գնման դեպքում **25% idcoin-ի** վերադարձ և **100 ավիատոմսի հավաստագրի** խաղարկություն:

QR վճարումների խթանման և օգտատերերի համար առավել հարմարավետ և շահավետ փորձի ապահովման նպատակով իրականացվել են արշավներ, որոնք ներառել են **գործընկերային առաջարկներ** մանկական զվարճանքի կենտրոններում և լողավազաններում նաև առօրյա QR վճարումների համար ակնթարթային խրախուսումներ՝ **1.5% idcoin** բոլոր հաճախորդների համար և լրացուցիչ **0.5% idcoin** **IDSalary** հաճախորդների համար:



Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

«Մի դրամի ուժի» մեր ընկերության Սոցիալական պատասխանատվության գլխավոր ծրագիրն է, որն իրականացվում է Իդրամի հետ համատեղ: Այն կոչված է աջակցելու Հայաստանում կենսական և ռազմավարական կարևորություն ունեցող տարբեր ոլորտների զարգացմանը:

Այս տարի ծրագիրը նշում է իր 5-ամյակը, իսկ դա նշանակում է, որ արդեն 5 տարի է՝ մեր հաճախորդների կատարած յուրաքանչյուր վճարման դիմաց «Մի դրամի ուժին» են փոխանցվում այդքան կարևոր և ամենակարող մեկ դրամները:



- «Մի դրամի ուժի» 2025-ի հունվար ամսվա հավաքված գումարը՝ **4.632.795** դրամն ուղղվեց ԱՏԱՄ-ի «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցներ ոչ ֆորմալ տեխնոլոգիական կրթական ծրագրի **ԴիջիԿոդ 2025 կիրառական ծրագրավորման պատանեկան մրցույթին**, որն է՛լ ավելի է պատանիների շրջանում խթանելու ֆինթեք ուղղությամբ նախագծեր ստեղծելու գաղափարը:



- **4.664.972** դրամ կազմեց «Մի դրամի ուժի» փետրվար ամսվա արդյունքը, որն ուղղվեց «ՔայլՏեք» ընկերության տեղաշարժի մատչելի լուծումներ առաջարկող նոր ծրագրին: Շնորհիվ նոր սարքավորումների, հաշմանդամություն ունեցող թվով 8 շահառու այսուհետ կունենան հնարավորություն հեշտությամբ բարձրանալ և իջնել ցանկացած աստիճանասանդուղդով:



- Մարտ ամսվա ընթացքում «Մի դրամի ուժի» հավաքագրած **5.237.825** դրամն ուղղվեց «Հերոսների վերականգնողական քաղաք» հոգեկան առողջության կենտրոնին, որի նպատակն է ապահովել պատերազմի մասնակից անձանց և նրանց ընտանիքների անդամների հոգեկան և սոցիալական վերականգնումն ու բարելավումը:



- Ավանդույթի համաձայն, **ապրիլ** ամսվա ծրագրի շահառուն կրկին «**4090**» հիմնադրամն էր: Այս անգամ կուտակված **4.919.726** գումարի կեսն ուղղվեց հիմնադրամին, իսկ երկրորդ կեսը՝ idcoin-ների տեսքով, ուղղվեց հիմնադրամի շահառու քառօրյա և 44-օրյա պատերազմների մասնակից թվով 60 տղաներին:



- Մայիս ամսվա ընթացքում հավաքագրված **4.991.788** դրամ գումարը IDBank-ը և Իդրամն ուղղեցին «Մի դրամի ուժի» շահառու «Հայորդի» ամենամյա ճամբարին, որին մասնակցելու են զոհված հայորդիների շուրջ 300 երեխաներ:



- Իսկ **հունիսի** շահառուն Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամի շահառու արյան բարորակ խնդիրներ ունեցող երեխաների աջակցության ծրագիրն էր, որի շրջանակում հավաքագրված ողջ գումարը՝ **4.837.096** ՀՀ դրամն ուղղվելու է երեխաների համար դեղորայքի ձեռքբերմանը:

5

Ռիսկերի կառավարում

Հիմնական տնտեսական նորմատիվներ

25

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ


26

Հիմնական տնտեսական նորմատիվներ


Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները՝ կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից բարձր մակարդակում:

2025 թվականի 1-ին կիսամյակում Բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 17.1% (պահանջվող նվազագույն մեծությունը 11% է), իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները՝ համապատասխանաբար 23.4% և 67.7% (պահանջվող նվազագույն մեծությունները համապատասխանաբար 15% և 60% են):


Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1



Ընդհանուր իրացվելիության նորմատիվ Ն2(1)



Ընթացիկ իրացվելիության նորմատիվ Ն2(2)



Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

Վարկային ռիսկի կառավարում

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները՝

- ✓ վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը
- ✓ գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցունակության աստիճանը և մրցակցությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի, զուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է նաև վարկային ռիսկի ախտորոշակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ, սերոինգային մոդելների մշակմամբ և շարունակական թարմացմամբ:

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հետևում է ինչպես իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվներին (ընդհանուր, ընթացիկ, LCR, NSFR իրացվելիության նորմատիվներ), այնպես էլ վերջիններին ներքին՝ ավելի խիստ սահմանաչափերին:

Բացի նշվածից, իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է նաև Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդելի և սթրես-թեստավորման միջոցով:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցում շուկայում գործող ցուցանիշներին, մշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ճեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով՝ նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը:

Արտարժույթային ռիսկի կառավարում

Արտարժույթային ռիսկի կառավարման նպատակով Բանկը իրականացնում է արտարժույթային բաց դիրքերի կառավարում՝ հետևելով սահմանված արտարժույթային ռիսկի կառավարման նորմատիվային և ուղենիշային ցուցանիշների սահմանաչափերի պահպանմանը:

Գործառնական ռիսկի կառավարում

Գործառնական ռիսկերի հայտնաբերման և դասակարգման համար Բանկն իրականացնում է ռիսկերի մշտադիտարկում, տեղի ունեցած գործառնական պատահարների վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրում և խաբեության ռիսկի հայտնաբերում:

Բանկը շարունակական քայլեր է ձեռնարկում տեղեկատվական անվտանգության համակարգերի զարգացման, առցանց զեղծարարության կանխարգելման ուղղություններով:

Երկրի ռիսկի կառավարում

Այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը՝ հիմք ընդունելով միջազգային ռեյթինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը և ներքին ընթացակարգով սահմանված սահմանաչափերը:

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

Համբավի ռիսկի կառավարում

Կառավարման նպատակն է բացահայտել «Այդի Բանկ» ՓԲԸ բնականոն գործունեության ընթացքում բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքի առաջացման ուղղությունները և սահմանել Բանկի կողմից համբավի ռիսկի կանխարգելմանը/նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

Ռազմավարական ռիսկի կառավարում

Ռազմավարական ռիսկի առաջացման հնարավորությունը բացահայտելու և գնահատելու նպատակով Բանկը ներդրել է Ռիսկի ախորժակի մոնիթորինգի համակարգ: Ռազմավարությամբ սահմանված ռիսկի ախորժակից շեղումների առկայության պարագայում Բանկը համապատասխան քայլեր է ձեռնարկում ռիսկերի նվազեցման ուղղությամբ:

Թվարկված ռիսկերի գծով Բանկում գործող նորմատիվային դաշտը կարգավորվում է IDBank-ի ներքին և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան իրավական ակտերով:

30/06/2025թ դրությամբ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկեր (ՓԼ/ԱՖ ռիսկեր)

Համակարգում ֆինանսական հանցագործությունները կանխելու և միջազգային պատժամիջոցներին համապատասխանություն ապահովելու նպատակով Բանկը սահմանել է ՓԼ և ԱՖ միջոցառումներ՝ ներառյալ հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը, մասնավորապես հաճախորդների գործունեության և գործարքների կասկածելի բնույթը:

Բանկը ներդրել է ավտոմատացված ծրագրային լուծումներ (ինչպիսիք են Siron վերլուծական լուծումները, CRM և այլն)՝ ապօրինի գործողությունները իրական ժամանակում և պարբերաբար բիզնես հարաբերությունների ընթացքում արդյունավետորեն հայտնաբերելու և կանխելու, ինչպես նաև Բանկի գործունեությունը ՓԼ/ԱՖ պատժամիջոցների կանոնակարգերին համապատասխան պահելու նպատակով:

Պատասխանատու անձանց հայտարարություն

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

- 1. IDBank-ի՝ 2025 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ են և լիարժեք, բոլոր էական առումներով համապատասխանում են իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- 2. 2025թ. առաջին կիսամյակի առկիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ:

Միեր Աբրահամյան	Վարչության նախագահ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Արման Ասատրյան	Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Կարեն Նալբանդյան	Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Արթուր Համբարձումյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Անուշիկ Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Սերգեյ Առաքելյան	Թվային բանկինգի տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Լիլիթ Սարգսյան	Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Լիլիթ Գրիգորյան	Գործառնական տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Վաչե Վարդյան	Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)